ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2020/37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 37

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ /ՀՀ ՊԿԱ/
Գործունեության հասցեն՝	Կիևյան 8, Երևան, 0028 ՀՀ
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	**4 տարի ժամկետով, ինստիտուցիոնալ հավատարմագրում 21.05.2015թ.- 21.05.2019թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2020 թվականի դեկտեմբերի 24-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում, քննարկեց Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա (այսուհետ՝ ՀՀ ՊԿԱ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ ՊԿԱ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով ՀՀ պետական կառավարման ակադեմիայի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ակադեմիայի ներկայացուցիչների հետ

հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 24 ապրիլի 2018թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 11 ապրիլի 2019թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 29-31 մայիսի 2019թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 10 հոկտեմբերի 2019թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 4 նոյեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը1: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ՀՀ պետական կառավարման ակադեմիան, հետևելով 2015 թ. փորձագիտական գնահատման ժամանակ տրված խորհրդատվություններին, իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ մի շարք ոլորտներում:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար, մյուս ոլորտներում չնայած իրականացված փոփոխություններին դեռևս բարելավման անհրաժեշտություն կա:

1. Ակադեմիան նախորդ հավատարամգրան արդյունքների հիման վրա, մշակել է նոր 2019-2024թթ. ռազմավարական ծրագիր և վերանայել է իր առաքելությունը՝«Հանրային և մասնավոր հատվածների համար բարձր որակավորում ունեցող ղեկավար կադրերի պատրաստման պահանջները բավարարող բարձրագույն կրթության և լրացուցիչ կրթական ծրագրերի շարունակական կատարելագործումը, գիտական և կիրառական հետազոտական աշխատանքների կատարումը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը, պետական կառավարման ոլորտի՝ տեղեկատվավերլուծական նյութերով ապահովումը, ինչպես նաև պետական կառավարման ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությունը»:

Նախաձեռնել է ՄԿԾ-ների համահնչեցում կառույցի վերանայված առաքելությանը: ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքները քարտեզագրված են, մշակվել են ընդհանուր ձևաչափով առարկայական ծրագրեր, մանրամասն ներկայացված են դասավանդման և ուսումնառության մեթոդները: Այդուհանդերձ իրականացված փոփոխությունների ազդեցության գնահատումներ, ուսանողների գնահատման միասնական համակարգի վերլուծություն չեն իրականացվել: Մագիստրոսական թեզերի գնահատման չափանիշներ

առկա չեն և դրա բացակայությունը ռիսկային է դարձնում գնահատման թափանցիկությունը, օբյեկտիվությունը և որոկավորումների շնորհման արժանահավատությունը: Առկա են ակնհայտ գրագողության դեպքեր:

Ընդհանուր առմամբ ակադեմիայում առկա է մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, ռեսուրսները հնարավորություն են ընձեռում ՄԿԾ-ների իրականացման համար:

Ակադեմիան ունի բարձր որակավորում, երկար տարիների փորձ ունեցող կառավարման և տնտեսության տարբեր ոլորտների առաջատար մասնագետներով համալրված բավարար պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմ: Այնուամենայնիվ ՊԴ կազմի զգալի մասը հրավիրյալ՝ ժամավճարային հիմունքով, դասախոսներ են, ինչը վտանգում է դասախոսական կազմի կայունությունը: Նախորդ հավատարմագրումից հետո չեն մշակվել ՊԴ կազմին ներկայացվող մասնագիտական պահանջները: ՊԴ կազմի պաշտոնների տեղակայումը չի իրականացվում մրցույթային եղանակով: ՄԿԾ-ների մշտադիտարկման պրոցեսում բացակայում է արտաքին շահակիցների մասնակցությունը: Դասախոսական կազմի ներկայացուցիչները բավարար չեն մասնակցում կրթական ծրագրերի բովանդակության ստեղծմանը: Նախորդ հավատարմագրումից հետո, որակի ապահովման գործընթացները չեն բերել ՄԿԾ-ների որակական փոփոխությունների և մագիստրոսական թեզերի բարելավումների, քանի որ համակողմանի վերլուծությունները, ինչպես նաև ՀՀ ՊԿԱ ուժեղ ու բարելավման ենթակա ուղղությունների բացահայտմանը միտված գնահատումները բացակայում են:

Առկա են որակավորումների արժանահավատ շնորհման առաջխաղացման միտումներ և օրինակներ, սակայն կան նաև որոշակի ռիսկեր որակավորումների արժանահավատ շնորվման որակի ապահովման տեսանկյունից.

2. Նախորդ հավատարմագրումից հետո ակադեմիան կառավարման և վարչարարության ոլորտում ընդհանուր առմամբ գրանցել է դրական դինամիկա. ավելացել է ակադեմիայի բյուջեն, բարձրացել է աշխատողների աշխատավարձը, բարձրացել է ուսանողների և վերապատրաստվողների թվաքանակը, բարելավվել են նյութատեխնիկական ռեսուրսները:

Միևնույն ժամանակ ակնհայտորեն առկա է կառավարման և վարչարարության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն, մասնավորապես՝ գործընթացների փոխկապակցվածության ապահովման և պլանավորման գործիքների կատարելագործման, ճիշտ փաստաթղթավորման առումով: Ակադեմիան ունի արդյունքահեն կառավարման խնդիր, կառավարումն իրավիճակային է, չի իրականացվում ՌԾ նպատակների խնդիրներին հասնելու ձևակերպմամբ: Վարչարարության գործընթացների մեծամասնությունը պլանավորման և իրականացման փուլերում են, բացակայում են ռազմավարական պլանավորման և դրանից բխող գործընթացների արդյունավետության, արտաքին միջավայրի գործոնների ազդեցության վերլուծությունները, իսկ որոշումների կայացումը չի հիմնվում հավաստի տվյալների վրա:

Առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը, սակայն արդյունքահեն կառավարումն ու որակի ապահովման համակարգը կայացման փուլում են.

3. Նախորդ հավատարմագրումից հետո հետազոտությունների իրականացման և զարգացման հստակ քաղաքականություն դեռևս ձևակերպված չէ և առկա չեն համապատասխան ընթացակարգեր, ինչը ռիսկային է դարձնում հետազոտական աշխատանքների շարունակական զարգացումը և արդյունքների առևտրայնացումը, դժվարեցնում է գիտահետազոտական գործունեության որակի գնահատումը: Իրականացվում են հետազոտական որոշ նախագծեր, ստեղծվել են հետազոտական կենտրոններ և գիտահետազոտական լաբորատորիա, բայց իրականացվող հետազոտությունները չեն առնչվում ակադեմիայի գիտական ուղղությունների հետ և տեսանելի չէ կապը ուսուցման հետ: Ինչպես նախորդ հավատարմագրման ժամանակ, այժմ ևս հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ առկա չեն, որը մագիստրոսական կրթության համար մեծ ռիսկ է: Միջազգայնացման ոլորտում թեև գրանցվել է գործընկեր-կառույցների թվաքանակի աճ, սակայն ըստ էության դեռևս ոչ բոլորի հետ են իրականացվում համագործակցության գործողություններ, բացակայում է միջազգայնացման և ուսումնական գործընթացների փոխկապակցումը: Շատ եզակի դեպքեր կան շարժունության և միջազգային համագործակցության հետ կապված:

Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը.

4. Առկա են առանցքային թերություններ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև բարելավման միտումներ:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի կողմից ներկայացված ծրագիրը բավականին իրատեսական է, սակայն ոչ ամբողջական և ամենայն հավանականությամբ պլանավորված բարեփոխումները կբերեն միայն մասնակի որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով,** որը թույլ կտա հաստատության զարգացումը պահել ուշադրության կենտրոնում և ապահովել որակի շարունակական բարելավում:
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.

   ա) **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

   բ) բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի քանակական ցուցիչներ և թիրախային նպատակներ ունենալու պահանջը,

գ) բուհի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը,

գ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու համալսարանի հավակնությունների տեսակետից՝ միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները:

3. Հատուկ ուշադրություն դարձնել.

ա) Մասնագիտության կրթական ծրագրերի, իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատմանը ու բարելավմանը,

բ) ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,

գ) արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը,

դ) ՊԴ կազմի ձևավորման սկզբունքներին և կայունության խնդիրներին,

ե)հետազոտական գերակայությունների վերհանմանը, միջազգայնացման ռազմավարության ձևավորմանը,

զ) որակի ներքին ապահովման կայուն համակարգի ստեղծմանն ու շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանը:

4. Կազմակերպել ՀՀ ՊԿԱ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀՀ ՊԿԱ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2020 թ., դեկտեմբերի 24
ք.Երևան